ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«09» 06 2026 թ. N /ՀՄԱ/3958-26

«ԽԱՐԱԶՅԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ԽԱՐԱԶՅԱՆԻՆ
Ք. ՎԱՆԱՁՈՐ, ԱԴԱՄՅԱՆ Փ., ՑԱ/3

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի՛ պարոն Խարազյան,

Միասնական սոցիալական ծառայության և «Խարազյան Գրուպ» ՍՊ ընկերության միջև 03.03.2026 կնքված թիվ ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-26/10-6 պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Խարազյան Գրուպ» ՍՊ ընկերության կողմից պետք է իրականացվեր 393 (երեք հարյուր իննսուներեք) դրամ պայմանագրային գնով Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ապրանքի 1-ին խմբաքանակի՝ 0.5 լ ծավալով շշալցված թվով 200 հատ կերամիկական մակերեսի խորը աղտոտվածությունը մաքրող մածուկի մատակարարում:

«Խարազյան Գրուպ» ՍՊ ընկերության կողմից չեն պահպանվել Պայմանագրի 1.1-ին, 2.4.1-ին և 2.4.2-րդ, 6.1-ին կետերով սահմանված պայմանները, մասնավորապես չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածներով սահմանված ապրանքների 1-ին խմբաքանակը, որի հիմքով խախտվել է նաև Պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները և միաժամանակ 2026 թվականի հունիսի 1-ին Ծառայության պաշտոնական էլ. Փոստով ստացվել է «Խարազյան Գրուպ» ՍՊ ընկերության գրությունը՝ վերջինիս կողմից ապրանքների մատակարարման պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ:

ՀՀ, Երևան, Նալբանդյան 13, 0010
uss.social.gov.am, info@socservice.am, հեռ՝ +374 60 65 40 75

Ըստ այդմ՝ առաջանում է նաև Պայմանագրի 6.2-րդ կետով սահմանված պատասխանատվությունը՝ ընդհանուր՝ 6400 դրամ և 9600 դրամ տուժանքների չափով:

Ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետով՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2026 թվականի հունիսի 8-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Խարազյան Գրուպ» ՍՊ ընկերության միջև 03.03.2026 կնքված թիվ ՄՍԾ ԷԱՃԱՊՁԲ-26/10-6 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի և որակավորման ապահովման գումարը:

Հրավերի 8.15 կետի համաձայն՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ, եթե մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Միաժամանակ Միասնական սոցիալական ծառայությունը պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ձեր կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները և կից պահանաջագրերը կներկայացնի նաև Ձեզ սպասարկող բանկին և բանկի կողմից վճարումն ամբողջությամբ ապահովելու դեպքում ևս պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հայտնում եմ նաև, որ վերը նշված գործողությունների՝ վճարումների չիրականացման դեպքում պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ստորագրող
ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ
4009900954

2026-08-09 17:58 +17 GMT+4
Հայտատվա[illegible]Գ-ի կողմից

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԴԱՎԻԹ ՄԵԼԻՔՅԱՆ**

Կատարող՝ իրավաբանական վարչության
իրավական ապահովման բաժնի
գլխավոր իրավաբան՝ Է. Ավանեսյան
հեռ.՝ +374 60 654-099/241